ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

--- ապրիլի 2022 թվականի № ----
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի №386Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2015 թվականի նոյեմբերի 18-ի №386Ա որոշմամբ «ՋՈՒՐԼՈՒՅՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է «Իջևան-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0583 լիցենզիան (այսուհետ՝ Լիցենզիա)՝ մինչև 2034 թվականի հուլիսի 28-ը գործողության ժամկետով,

բ) Հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 22-ի №351Ա որոշմամբ Լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգվել է 20 ամսով՝ մինչև 2023 թվականի մայիսի 28-ը, իսկ արտադրության ժամանակահատվածը՝ մինչև 2034 թվականի հուլիսի 28-ը,

գ) Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) 2017 թվականի մարտի 16-ի №1/18.2/10579-17 գրությամբ Հանձնաժողովին տեղեկացրել է, որ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի (այսուհետ՝ Նախարար) 2017 թվականի մարտի 9-ի №66-Ա հրամանով (այսուհետ՝ Հրաման) Ընկերությանը 2012 թվականի հոկտեմբերի 12-ին տրված №000165 ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման հայտը մերժվել է,

դ) ի պատասխան Հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 14-ի №ՌՆ/3.2-42/243-17 գրության՝ Նախարարությունը 2017 թվականի մայիսի 24-ի №1/18.2/11144-17 գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը 2017 թվականի մայիսի 18-ին հայց է ներկայացրել

Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Հրամանն անվավեր ճանաչելու պահանջով (վարչական գործ՝ №ՎԴ/4421/05/17),

ե) Նախարարության 2018 թվականի դեկտեմբերի 7-ի №4/18.2/40212-18 գրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2018 թվականի մարտի 21-ի որոշմամբ №ՎԴ/4421/05/17 վարչական գործի վարույթը կարճվել է՝ վեճը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով,

զ) Հանձնաժողովը, հաշվի առնելով Նախարարության 2018 թվականի դեկտեմբերի 7-ի №4/18.2/40212-18 գրությունը, ինչպես նաև «Էներգետիկայի մասին» օրենքի 30.1-րդ հոդվածի 2-րդ կետի «դ» ենթակետը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 2018 թվականի դեկտեմբերի 18-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ վերջինիս լիցենզավորված գործունեությունը Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան իրականացնելու փաստի ուսումնասիրության նպատակով, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 18-ի №ԱԲ-3521ի գրությամբ, որը երկարաձգվել է 30 օրով, 2 անգամ՝ 10-ական, այնուհետ կրկին 30 օրով,

է) վարչական վարույթի ընթացքում Ընկերությունը 2019 թվականի մարտի 18-ին և 20-ին Հանձնաժողով ներկայացրած գրություններով տեղեկացրել է, որ հայցադիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ընդդեմ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության՝ խնդրելով ճանաչել ջրօգտագործման թույլտվությունը օրենքով սահմանված կարգով երկարաձգված լինելու Ընկերության և Նախարարության միջև իրավահարաբերության առկայությունը, որպես հետևանք՝ ուժը կորցրած ճանաչել Հրամանը և Նախարարի 2019 թվականի մարտի 7-ի №52Ա հրամանը, որը Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի սույն թվականի մարտի 20-ի որոշմամբ ընդունվել է վարույթ (վարչական գործ №ՎԴ2/0075/05/19),

ը) Հանձնաժողովի 2019 թվականի մարտի 20-ի №58Ա որոշմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի հիմքով կասեցվել է Ընկերության նկատմամբ 2018 թվականի դեկտեմբերի 18-ից հարուցված վարչական վարույթը՝ մինչև վարչական դատավարության կարգով քննվող №ՎԴ2/0075/05/19 գործով վերջնական դատական ակտի կայացումը, ինչի մասին Ընկերությունը ծանուցվել է 2019 թվականի մարտի 21-ի №ԱՄ-568ի գրությամբ,

թ) «Վարդան Օրդինյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2022թ թվականի մարտի 29-ի գրության, ինչպես նաև «DataLex» դատական

տեղեկատվական համակարգի ուսումնասիրությունից պարզվել է, որ 2021 թվականի դեկտեմբերի 15-ին Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը №ՎԴ2/0075/05/19 գործով կայացրել է «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշում: Ըստ այդմ, օրինական ուժի մեջ է մտել Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանի 2021 թվականի հուլիսի 9-ի որոշումը, որով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2019 թվականի դեկտեմբերի 12-ին կայացրած վճիռը թողնվել է անփոփոխ: Վճռի համաձայն՝ «ՋՈՒՐԼՈՒՅՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության, երրորդ անձ՝ «Վարդան Օրդինյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն՝ Ընկերության և պատասխանողի միջև ջրօգտագործման թույլտվությունն օրենքով սահմանված կարգով երկարաձգված լինելու իրավահարաբերության առկայությունը ճանաչելու, որպես հետևանք՝ Նախարարի 2017 թվականի մարտի 9-ի թիվ 66-Ա և 2019 թվականի մարտի 7-ի թիվ 52-Ա հրամաններն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժվել է:

ժ) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա 2022 թվականի ապրիլի 4-ից Ընկերության նկատմամբ 2018 թվականի դեկտեմբերի 18-ին հարուցված վարչական վարույթը վերսկսվել է՝ ինչի մասին Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 4-ի №ԳԲ/34.1-Մ4-1/1003-2022 գրությամբ, որով Ընկերությանն առաջարկվել է նաև վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրություն իրականացնելու նպատակով, նոր հանգամանքների և տեղեկությունների առկայության դեպքում, եռօրյա ժամկետում դրանք ներկայացնել Հանձնաժողով: Սույն թվականի ապրիլի 19-ին Ընկերությունը հայտնել է, որ դիմել է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն՝ վերանայելու Ընկերությանը տրամադրված ջրօգտագործման թույլտվության չերկարաձգման հարցը և տալու նոր ընթացք այն երկարաձգելու նպատակով: Պատասխանն ստանալուց անմիջապես հետո կներկայացնի Հանձնաժողով: Քանի որ 2022 թվականի ապրիլի 1-ին տեղի է ունեցել «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքին և Ընկերության գործող կանոնադրությանն համապատասխան՝ Ընկերության_մասնակիցների փոփոխություն՝ անհրաժեշտություն կա մինչև 2 ամիս ժամկետում ուսումնասիրելու_Ընկերության, մասնավորապես «Իջևան-1» փոքր հիդրոէլեկտրակայանի հետ կապված փաստաթղթաշրջանառությունը: Միաժամանակ Ընկերությունը խնդրել է մինչև 2 ամիս ժամկետ վերսկսված վարչական վարույթով բարձրացված հարցերի նկատմամբ պատասխաններ ներկայացնելու համար,

ժա) «Էներգետիկայի մասին» օրենքի 30.1-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի համաձայն՝ լիցենզավորված անձի գործունեության լիցենզիան կարող է դադարեցվել էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձի՝ տվյալ կայանի համար տրամադրված ջրօգտագործման թույլտվությունն ուժը կորցրած ճանաչվելու կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետը չերկարաձգվելու դեպքում՝ ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած ակտի հիման վրա,

ժբ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարն ամբողջությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե որոշում է ընդունել արտադրության լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին,

ժգ) վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ №ՎԴ2/0075/05/19 գործով առկա է օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտ, ըստ որի Ընկերության և Նախարարության միջև ջրօգտագործման թույլտվությունն օրենքով սահմանված կարգով երկարաձգված լինելու իրավահարաբերության առկայությունը մերժվել է, որպես հետևանք՝ Ընկերության №000165 ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետը չերկարաձգվելու վերաբերյալ Նախարարի 2017 թվականի մարտի 9-ի №66-Ա և 2019 թվականի մարտի 7-ի Ընկերության վարչական բողոքն առանց քննարկման թողնելու մասին թիվ 52-Ա հրամանները անվավեր չեն ճանաչվել, ուստի դրանք ուժի մեջ մտած և կատարման ենթակա ակտեր են: Հետևաբար, հաստատված է համարվել Ընկերության №000165 ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետի չերկարաձգման իրավաբանական փաստը, որը հիմք է «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30.1-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի համաձայն՝ ԼԷ №0583 լիցենզիայի գործողության դադարեցման համար, իսկ ինչ վերաբերում է հարուցված վարչական վարույթի ժամկետը ևս 2 ամիս երկարաձգելուն, ապա հարկ է նշել, որ վարչական վարույթի ժամկետը երկարաձգելու՝ Ընկերության փաստարկները օրենսդրությամբ սահմանված կարգով հիմք չեն, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30.1-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ

հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետը՝ Հանձնաժողովը ***որոշում է.***

1. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 18-ի «ՋՈՒՐԼՈՒՅՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Իջևան-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №386Ա որոշումը:
2. Պարտավորեցնել Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնհինգօրյա ժամկետում «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2018 թվականի հունվարի 12-ի №O.AB.100.11CB.ESC.2.112.18 գրությամբ Հանձնաժողով ներկայացված և 2020 թվականի հունվարի 10-ի №O.AB.100.12CIB.PIED.0.110.20, այնուհետև 2021 թվականի նոյեմբերի 11-ի թիվ O.AB.100.12CIB.PIED.0.19168.21 գրություններով գործողության ժամկետը երկարաձգված բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված 3,775,000 (երեք միլիոն յոթ հարյուր յոթանասունհինգ հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում՝ Դատարան և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքի:
4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
— ապրիլի 2022թ.